ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՇԽԱՏԱՆՔԻ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՀԱՐՑԵՐԻ
ՆԱԽԱՐԱՐ

Հ Ր Ա Մ Ա Ն

«07» մարտ 2024 թ. N 57-Ա/1

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՀԱՐՑԵՐԻ ՆԱԽԱՐԱՐԻ 2024 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐԻ 11-Ի N 6-Ա/1 ՀՐԱՄԱՆՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության վարչապետի 2018 թվականի հունիսի 11-ի N 700-Լ որոշման հավելվածի 18-րդ կետի 20-րդ ենթակետով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2024 թվականի փետրվարի 29-ի N 279-Լ որոշման 1-ին կետը.

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ՝

1. Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարի 2024 թվականի հունվարի 11-ի «Հայաստանի Հանրապետության կառավարության 2022 թվականի հունվարի 13-ի N 64-Լ որոշմամբ հաստատված միջոցառման շրջանակներում աջակցություն ստացած ծնողներին մինչև երեք տարեկան երեխայի խնամքը կազմակերպելու համար աջակցության տրամադրման պայմանագրի օրինակելի ձևը հաստատելու մասին» N 6-Ա/1 հրամանի (այսուհետ՝ հրաման) և հավելվածի վերնագրերում «**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ**

2022 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐԻ 13-Ի N 64-Լ ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ՄԻՋՈՑԱՌՄԱՆ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ԱՋԱԿՑՈՒԹՅՈՒՆ ՍՏԱՑԱԾ» բառերը փոխարինել «**ԱՆՀԱՅՏ ԲԱՑԱԿԱՅՈՂ ԿԱՄ ՄԱՀԱՑԱԾ ՃԱՆԱՉՎԱԾ ԶԻՆԾԱՌԱՅՈՂՆԵՐԻ**» բառերով:

2. Հրամանի 1-ին կետում «Հայաստանի Հանրապետության կառավարության 2022 թվականի հունվարի 13-ի N 64-Լ որոշմամբ հաստատված միջոցառման շրջանակներում աջակցություն ստացած» բառերը փոխարինել «Անհայտ բացակայող կամ մահացած ճանաչված զինծառայողների» բառերով, իսկ հրամանի հավելվածի նախաբանում «ՀՀ կառավարության 2022 թվականի հունվարի 13-ի N 64-Լ որոշմամբ հաստատված միջոցառման շրջանակներում աջակցություն ստացած» բառերը՝ «Անհայտ բացակայող կամ մահացած ճանաչված զինծառայողի» բառերով»:

3/7/2024

X

ՆԱՐԵԿ ՄԿՐՏՉՅԱՆ

Signed by: MKRTCHYAN NAREK 3014890804

Ն. ՄԿՐՏՉՅԱՆ